



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ժ. — ՇՐՋԱՆ ԻԱ.

1888

ՏԱՐԻ ԻԱ. ՀՈԿՏԵՄ. 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԹԵ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ ԵՐԲԵՔ ՀՌՈՄ ՁԵ ԵԿԵԼ *).

Դա էս վէ՛ և է վերայ այդք վէ՛ շէնցեց զէկեղեցի է՛: Ահա Աւետարանի այն տունը, որ Հռոմի Ս. Պետրոսի այցելուէն՝ ոսկեփայլ

(*) Այս առիթը քաղուածարար Հանում ենք մի յօդուածից, որ Բէրլինի Համալսարանի փիլիսոփայութեան ուսուցչապետ Պ. Եդուարդ Գեյլէրի սոյն նիւթի վրայ հրատարակած աշխատութեան առթիւ տպագրած է *Revue politique et littéraire* (Հանդէս քաղաքական և գրական) ֆրանս. շաբաթաթերթի մէջ:

տառերով դրոշմուած է տեսնում տաճարի գմբէթի շուրջը. այս է Յիսուսի այն խօսքը, որի վերայ Հռոմի եպիսկոպոսները հիմնեցին իրանց գահերեցութեան իրաւունքը միւս բոլոր եպիսկոպոսների վրայ, մի տեսակ բացարձակ իշխանութեան իրաւունք ընդհանուր եկեղեցու վրայ, և Վատիկանի ժողովը Նեոն ժ. Գ. թղի նախորդի օրով Պապի անսխալականութիւնը հռչակելով ուղեց այս անտեղի պահանջողութիւնը նուիրագործել: Արաքէս ղոլարս ի. ասում է դարձեալ Յիսուս Պետրոսին, Յովհաննու Աւետարանի վերջին գլխում, և այս կէտի վերայ նոյնպէս շեշտում են այն անձինք, որոնք կամենում են Հռոմի գահակալներին մի բացառիկ դիրք տալ Քրիստոսեան եկեղեցու մէջ: Հետաքրքրական է տեսնել թէ կաթողիկոսութիւնը ինչպէս կարողացաւ այս նպատակը եզրակացութիւն հանել իւր համար Ս. Գրքի երկու խօսքերից, որոնցից մէկը իսկապէս բառերի նոյնութեան վերայ է հիմնվում (Պետրոս և վէմ համանիշ բառեր են), իսկ միւսը մի փոխաբերութիւն է, որ Յիսուս ի դէմն Պետրոսի ուղղելով՝ բոլոր առաքեալներին էր ուղղում: Եթէ մինչև անգամ ենթադրենք թէ Յիսուս այս երկու խօսքերով կամեցաւ գլխաւորութիւն շնորհել Պետրոսին միւս առաքեալների վրայ, մի բարձրագոյն իշխանութիւն իւր վարդապետութեան հետեւողների վերայ, ոչ մի իրական փաստ չկայ, որով կարելի լինէր հաստատել թէ երկնաւոր Վարդապետի դիտաւորութիւնն այն էր որ մի ուրիշը յաջորդէր Պետրոսին այդ առաջնութեան մէջ. թէ նա այս խօսքերը արտասանելով ոչ թէ Պետրոսին յատուկ և անձնական պատիւ տալ ուղեց, այլ մի մշտաւ իշխանութիւն հաստատել, որի առաջին ներկայացուցիչը լինէր Պետրոսը:

Սակայն դիցուք թէ խնդրի այս մասը գեռ կարող է վիճարանութեան նիւթ լինել, քանի որ Փրկչի յատուկ խօսքերը կան, որ տարբեր կերպով հասկանում և ըստ այնմ էլ մեկնում են: Բայց ինչ ասենք այն անձանց համար, որոնք Պետրոսի գլխաւորութիւնը Հռոմի աթոռի հետ են կապում և նոյն աթոռի հայրապետներին գերիշխանութեան արտօնութիւն են ընծայում բովանդակ քրիստոնէական աշխարհի վրայ: Աւետարանի մէջ Յիսուս ոչ մի տեղ չէ պատուիրում Պետրոսին Հռոմ գնալ և իւր իշխանութեան աթոռը այնտեղ հաստատել: Հռոմը հրէստանից շատ հեռու էր, և Յիսուս չէր էլ մտածում նուաճել

նորան, սուրբ քաղաքը Նորա Համար, ինչպէս և բոլոր Հրէից Համար, Երուսաղէմն էր, և եթէ Աստուծոյ Որդին մտածած լինէր երբէք իւր բարոյական իշխանութեան աթոռը մի տեղ հաստատել, այդ անշուշտ Երուսաղէմում կրէինէր, Երուսաղէմումն էր որ անմահի մահից անմիջապէս յետոյ Նորա աշակերտները հաստատեցին առաջին քրիստոնեայ հասարակութիւնը. եթէ ուրեմն Պետրոս մի տեղ առաջին եպիսկոպոս եղած է, այդ Երուսաղէմումն էր:

Ստոյգ է, կաթողիկ եկեղեցին հեշտ է համարում այս դժուարութիւնից ելք գտնելու: Պետրոս, ասում է նա, անշուշտ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսն եղաւ, բայց նա եղաւ նոյնպէս և Հռոմի առաջին եպիսկոպոսը: Նա ինքը անձամբ փոխադրեց իւր աթոռը Հռոմ, և այս քաղաքը այնուհետեւ քրիստոնէական եկեղեցու գլուխների անփոփոխ աթոռանիստն է եղած: Այս է երկայն դարերէ հետէ կաթողիկական աւանդութեան հաստատուն հաւատը, և այս հաւատն ունեցողները ընդունում են ոչ միայն թէ Պետրոս առաքեալն է հիմնել Հռոմի աթոռը, այլ նաեւ թէ նա քսան և հինգ տարի կամ մի քառորդ դար է նստել նոյն աթոռի վերայ: Մինչև անգամ մի համոզում էր կազմուել թէ Պետրոսի յաջորդներից ոչ ոք չպիտի կարողանայ առաքեալի տարիներից անցնել, և կաթողիկական բարեպաշտութիւնը աստուածային նախախնամութեան մեծամեծ խորհուրդների կատարումը ուղեց նկատել Պիոս Թ. թղի հայրապետութեան մէջ, որ « Պետրոսի տարիներից » շատ աւելի երկար տևեց:

Արդ, Պետրոս առաքեալը իրօք Հռոմ եկա՞ծ է: Այս է արդի պատմական գիտութեան յուզած կարեւոր խնդիրը, այն գիտութեան՝ որի առաջ աւանդութիւնները միայն այն պայմանով ստոյգ արժէք ունին, եթէ դրական տեղեկութիւններով են հաստատուում կամ գոնեա հաւանականութեան հակառակ չին: Պէտք է խոստովանել որ Հռոմի պապերի իշխանապետական ձգտումները, որոնք երբեմն մինչև անհեթեթութեան են հասնում, առաջին կարեւորութիւն են տալիս այս խնդրի լուծմանը: Եթէ դուրս գայ թէ ոչ միայն պատմական ստուգութեան, այլ նոյն իսկ ամենայն հաւանականութեան հակառակ է Պետրոսի Հռոմ գալն ընդունել, նոքա որոնք իրանց այս առաքեալի

յաջորդներն են անուանում մեծ հարուած կըստանան իրանց իշխանասիրական հետամուտութիւնների նկատմամբ, հատուա՛ւ որից անկարող կըլինին նորից ոտի կանգնել:

Վաղուց է արգէն որ այս խնդիրը արծարծուած է գիտնականների կաճառի մէջ: Պ. Եղուարդ Գեւլէր, Բէրլինի համալսարանի ուսուցչապետը, հեղինակ բազմաթիւ աշխատութիւնների քրիստոնէութեան սկզբնաւորութեան վրայ, սորանից մի քանի տարի առաջ յիշեալ խնդրի վրայ մի նշանաւոր հետազոտութիւն հրատարակեց, որի էական մասերը կաշխատենք ամփոփել այստեղ:

Քրիստոնէութեան ամենահին յիշատակարանների մէջ ոչ մի վկայութիւն չենք գտնում, որով կարելի լինէր հաստատել թէ Պետրոս առաքեալը Հռոմ եկած է: Այս հանգամանքը անկարելի է մոռացմամբ կամ զանցաւորութեամբ բացատրել, քանի որ Պետրոսի վրայ ուրիշ աւիթներում խօսք է լինում և այսպիսի նշանաւոր խնդիր, որպիսին է առաքեալի ուղևորութիւնը Հռոմ քարոզութեան նպատակով, չէր կարող հարկաւ առանց յիշատակութեան մնալ: Ընդհակառակն Պողոսի թղթերը և Գործք Առաքելոցը ցոյց են տալիս մեզ նորան իբրեւ Հրէաստանում բնակող և Տեսառն եղբայր Յակոբոսի հետ հրէութիւնից դարձած քրիստոնեայ հասարակութեան գլուխ: Մի տեղ կայ միայն նոր Կտակարանի գրքերի մէջ, որ ենթագրել է տալիս ոմանց թէ, Պետրոս բնակել է Հռոմում, և յատկապէս Պետրոսի առաջին թղթի այն տեղը, ուր խօսք է լինում Բաբելոնի մասին, և ուր Բաբելոն ասելով ուզում է իբրեւ թէ Հռոմը հասկացնել: Բայց այստեղ Բաբելոն անունը միայն մի պայմանով կարող է Հռոմ նշանակել, այն է որ յիշեալ թուղթը այն անձինը չլինի որին ընծայվում է: Արդարեւ Հռոմը քրիստոնեաների լիզուլի մէջ միայն ներոնի հալածանքից սկսած Բաբելոնի խորհրդաւոր և անարգական անունը ստացաւ, այն հալածանքից, որի զոհերից մէկն էլ, ինչպէս ուզում են հաւատացնել, Պետրոս առաքեալն եղաւ: Թուղթը կարող է ուրեմն Պետրոսի Հռոմ գնալու վերաբերմամբ նպատաւոր գրութիւն համարուիլ միայն այն պայմանով որ անվաւեր ճանաչուի. բայց այն ժամանակ նա, իբրեւ վկայութիւն, իւր մեծ արժէքը կը կորցնէր:

Բնագիրներից հանած ապացոյցների վրայ պէտք է աւելացնել

բարոյական պատճառները: Ի՞նչ շարժառիթ կարող էր սննե-
նալ Պետրոս Հրէաստանը թողնելու և գալ Հռոմ Աւետարանը
քարոզելու համար: Բաւական է Առաքելական թղթերը բա-
նալ, որ տեսնենք թէ նախնական եկեղեցու մէջ հէնց սկզբից
երկու հոսանք կար: Քրիստոսի աշակերտների մեծ մասի հա-
մար քրիստոնէութիւնը մի տեսակ բարձր և ազնուացած հրէ-
ութիւն էր: Եբրայական ժողովուրդը մնում էր առաջուան
պէս Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը: Յիսուս էլ եկել էր ոչ
թէ օրէնքները լուծելու, այլ լրացնելու համար: Իրանք առա-
քեալները եբրայական կրօնի մէջ սնուած լինելով, սկզբում
կամենում էին որ նորահաւատները նոյն կրօնի բոլոր սովորու-
թիւնները կատարեն: Թվիտուութիւնից սկսած մինչև անսուրբ
կերակուրներու տեղի արգելքը: Հրէական ժողովրդին յատուկ-
ընազդմամբ նոքա խորշում էին ուրիշ ազգերից և չէին էլ կար-
ծում թէ քրիստոնէութիւնը պէտք լինի նոցա մէջ տարածել:
Կամ գոնեա հարկաւոր էին համարում նախապէս հրէական
կրօնին ծանօթացնել նոցա: որպէս զի յետոյ աւելի կատարեալ
կրօնի ծանօթութեանը հասնեն: Այս ոգին էր տիրում հրէայ
քրիստոնեաների մէջ:

Այս առաջին հոսանքի հակառակ՝ քրիստոնէական միւս հո-
սանքը ամենից առաջ և գլխաւորապէս հեթանոսների դարձն
ունէր ուչքի առաջ: Հրէաստանը մերժել էր ճշմարիտ Աստուծուն,
բայց այդ Աստուծուն մնում էր աշխարհը: Յաւիտենականի ընտ-
րեալ ժողովուրդը երեսը դարձրել էր իւր Մեսիայից, և այժմ
որ այդ ընտրեալ ժողովուրդը մերժուեցաւ, հեթանոսները
պէտք է բռնէին նորա տեղը: Քրիստոս խաչի վրայից բազուկ-
ները բաց անում և ազգերը իրան էր կանչում, պէտք էր ու-
րեմն գնալ հեթանոս աշխարհին աւետել բարի համբաւը:

Քրիստոնէութիւնը ըմբռնելու այս երկու եղանակներից երկ-
րորդը Պողոսին էր: Նա ամենայն իրաւամբ արժանի է հեթա-
նոսների առաքեալ կոչուելու: Ընչպէս որ քրիստոնէական ա-
ւանդութիւնը անուանել էր նորան: Այն օրից որ Պօլոս Քրիս-
տոսի վարդապետութիւնը հալածողից Դամասկոսի ճոճապարհի
վրայ նորա ամենաջերմ պաշտպանն էր դարձել, երբեք իւր
բռնելու ճանապարհի վրայ չէր վարանել: Դուրս գալով հրէաս-
տանից, նա գնացել էր ուղիղ գէպի հեթանոս ազգերը, դէպի

Յոյները և Հռոմայեցիները: Նա ունէր իւր յատուկ յայտնութիւնը, իւր ուղղակի հրամանը անընդմիջաբար Քրիստոսից ընդունած, որ յոյց էր տուել նորան իւր առաքելութիւնը: Նա ունէր իւր քրիստոնէութիւնը, որ նոյնքան լայն ու մարդասիրական էր, որքան միւսը նեղ ու փակ էր. ոչ թլփատութիւնն էր հարկաւոր համարում նա, և ոչ հին օրէնքի ուրիշ ծէսերի ու արարողութիւնների պահպանութիւնը: Արդարացումը հաւատով է լինում և ոչ հին օրէնքի գործադրութեամբ, որ լաւ էր անչափահասների համար, և այսուհետեւ աւելորդ էր Հօր Աստուծոյ որդւոց համար, որոնց Քրիստոս եկել էր ազատելու: « Զայս գիտեմք, ասում է Պօղոս Գաղատացւոց թղթի մէջ, եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինաց, եթէ ոչ ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի »:

Երկու վարդապետութիւնները պէտք է միմեանց հետ ընդհարուէին և մի մեծ վէճ յարուցանէին, որի պատմութիւնը կարելի է տեսնել Պօղոսի Գաղատացւոց գրած թղթի մէջ: Արդ՞ով էր կանգնած այս վէճի մէջ Պօղոսի առաջ, եթէ ոչ Պետրոսը, որ հարկաւ հրէայ քրիստոնեաների մէջ ամենից աններողամիտը չէր ի բնէ, բայց և այնպէս պաշտպանում էր սոցա հայեացքը, չէր համարձակում հակառակել նոցա, նոցա պէս խորշում էր Պօղոսի բռնած ընթացքից և չէր ուզում հրաժարուել հին օրէնքի բազմապատիկ սովորութիւններից: « Յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ասում է Պօղոս, ընդդէմ դարձայ նորա. քանզի գոգ իբրեւ սոգտեալ էր: « Եւ փոքր ինչ յետոյ աւելացնում է. « Ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն, եթէ դու որ հրէայդ ես՝ հեթանոսաբար և ոչ հրէաբար կեաս, դիմարդ սոյն Կեփանոսաց քնել հրէաբէն »:

Այսպիսով մի տեսակ բաժանումն ընկաւ քրիստոնէական գերդաստանի երկու մասերի մէջ. Պետրոսը հրէայ քրիստոնեաների գլուխը մնաց, Պօղոսը հեթանոսութիւնից դարձած քրիստոնեաների. մէկը Աւետարանի պատուէրի զօրութեամբ, միւսը Դամասկոսի յայտնութեան զօրութեամբ. « Հաւատացեալ է ինձ Աւետարանն անթլփատութեան, որպէս Պետրոսի ի թլփատութեան »: Բնական է ուրեմն Պօղոսին Գաղատիայից և Եփեսոսից յետոյ տեսնել Փիլիպպէում, Թեսաղոնիկէում, Աթէնքում, Կորնթոսում և վերջապէս Հռոմում: Հռոմ կանչում էր նորան

յատկապէս իւր մեծ պաշտօնը: Հեթանոսական աշխարհը նուաճելու համար՝ պէտք էր կայսրութեան մայրաքաղաքը նուաճել, պէտք էր Հռոմը դարձի բերել. և մենք տեսնում ենք արդարեւ որ Պօղոս Հռոմը այցելելու առթիւ օգտւում է: Ընակութիւն է հաստատում այնտեղ և եկեղեցի է հիմնում, իսկ երբ բացակայ է լինում՝ Հռոմից կամ հանգամանքները արգելք են լինում նորան հաւատացեալների մէջ գտնուելուն, իւր թղթերով քարոզում ու խրատում է նոցա: Պօղոսի քարոզութիւնը թերի կըլինէր, եթէ Հռոմը, որ իւր գլխաւոր նպատակն էր, իւր գործունէութեան շրջանից դուրս մնացած լինէր: Բայց ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ Հռոմը թլփատութեան առաքելի, հրէական սովորութիւնների կողմնակցի, Կրուսաղէմի եկեղեցու գլխի համար: Ոչինչ չէր կարող Պետրոսի ուշադրութիւնը դարձնել Հռոմի վրայ, և եթէ նա եկած լինէր այնտեղ քարոզելու, ներելի է կարծել թէ Պօղոսի ընդունելութիւնը չէր գտնիլ մեծ մայրաքաղաքի հեթանոսների կողմից: Հրէաստանում պէտք է մեռած լինէր նա, ինչպէս որ այնտեղ ծնել ու ապրել էր. եթէ իւր վարդապետի պէս նահատակուեցաւ, այնտեղ ընդունած պիտի լինէր նահատակութեան պրսակը: Բէ՛ւ չէ, անկարելի է երեւկայել թէ ի՞նչ հանգամանք, ի՞նչ ստիպողական պատճառ կարող էր համոզել նորան թողնել Հրէաստանը կամ Ասորիքը հեռաւոր Իտալիա գալու համար: Այսպիսի մի տեղափոխութիւն յանձն առնելու համար՝ հարկ էր որ Պետրոսը նախապէս հրաժարուէր այն ուղղութիւնից, որ այնքան ժամանակ պաշտպանել էր և Պօղոսի հայեացքը ընդունէր քրիստոնէութեան վրայ:

Եթէ Պետրոս եկել է Հռոմ, պէտք է որ կամ Պօղոսից առաջ եկած լինի, կամ նորա հետ, և կամ նորանից յետոյ: Եթէ Պօղոսից առաջ է եկել, ի՞նչպէս է լինում որ նախնական եկեղեցու ամենահին գրուածները այդ մասին ոչինչ յիշատակութիւն չեն անում. որ Պօղոսի թղթերի մէջ յիշուած այնքան անծանօթ անունների շարքում, Պետրոսի անունն անգամ չէ գտնուում, որ նորա անձի կամ ներկայութեան վերաբերմամբ ոչ մի աղնարկութիւն չկայ այդ թղթերի մէջ, որ Գործք Առաքելոցը Պետրոսի անունն վրայ կատարեալ լուութիւն է պահում: — Եթէ նա Պօղոսի հետ է եկել Հռոմ, ինչպէս որ ա-

սուսմ է երբեմն կաթողիկոսական աւանդութիւնը, ինչից է որ Գործոցի երկու յերջին գլուխները, որոնք այնքան որոշ մանրամասնութիւններով են պատմում Պօղոսի ուղևորութիւնը Կեսարիայից Հռոմ, Պետրոսի անունն անգամ չեն յիշատակում ուղեկիցների թիւում, Պետրոսի որ, ինչպէս կաթողիկոսներն տեսւմ են, եկեղեցու ճշմարիտ և միակ գլուխն է, Միւս կողմից, ի՞նչ պատճառ պիտի ունեցած լինէր Պետրոս, որ ոչ ամբաստանուած էր Պօղոսի հետ, ոչ էլ նորա պէս Հռոմի քաղաքացի էր, որ կարողանար կայսերական դատարանին բողոքել, ի՞նչ պատճառ կամ ի՞նչ հնարաւորութիւն պիտի ունեցած լինէր նա յիշեալ ուղևորութիւնը յանձն առնելու Պօղոսի հետ,— եթէ վերջապէս, և այս վերջին ենթադրութիւնն է որ կաբող է առաջ բերուիլ, Պետրոս ամէն աւանդութիւնների հակառակ՝ Պօղոսից յետոյ է եկել Հռոմ, ի՞նչպէս հաշտեցնենք այս հանգամանքը այն երկարատե եպիսկոպոսութեան հետ որ Հռոմը տալիս է Պետրոսին, կամ ի՞նչ հաւանական պատճառ տանք այս անագան տեղափոխութեանը, որ ամենայն հաւանականութեան հակառակ է և ոչ մի վկայութեամբ չէ հաստատուում:

Ոչ միայն քրիստոնէական թուականութեան առաջին դարի վկայութիւններից ոչ մինը Պետրոսի Հռոմ գնալը չէ յիշատակում, այլ նոյն դարի միակ վկայութիւնը, ուր Պետրոսի և Պօղոսի անունները միասին ենք գտնում, հակառակն է հաստատում: Կղեմէսի մի ժամանակն է այդ, որ գտնվում է առաքելական հայրերի գրուածների մէջ և որի հեղինակը հաւանականաբար այն Տիտոս Փլաբիոս Կղեմէսն է, որ իբրեւ քրիստոնեայ 96 թուականին նահատակուեցաւ Դումիտրիանոսի հրամանով: Այս նամակը գրուած է Հռոմից Կորնթոսի եկեղեցուն, ուր գլխութիւններ էին ծագել, Հին Կոստանդնուպոլիսից հանուած այլ և այլ վկայութիւններից յետոյ, նամակի հեղինակը գլխութիւնների աղետալի հետեանքները ցոյց տալու համար աւելացնում է. « Պետրոսի դէմ եղած անիրաւ հակառակութիւնները ոչ միայն մի կամ երկու անախորժութիւնների, այլ բազմաթիւ փորձութիւնների ենթարկեցին նորան, որով և հաւատի համար նահատակուելով երանելիների օթեանը մտաւ: Նոյնպէս և Պօղոս աղետալի տարաձայնութիւնների պատճառով

պարտաւորուեցաւ ոռոկալի կերպով մաքրուել հաւատացեալ-
ների խոստացուած պատկն ընդունելու համար, նոյն պատճա-
ռով է որ նա եօթն անգամ շղթայուեցաւ, քրտորուեցաւ և
քարկոծուեցաւ: Ճշմարտութիւնը աւետելով Արեւելքում և
Արեւմտքում, նա ձեռք բերեց հաւատի հերոսներին վերապահ-
ուած փառքը, և արդարութեան օրէնքը աշխարհին ուսուցա-
նելուց, իւր ընթացքը Արեւմտքում աւարտելուց իւր հաւատի
մեծութեան ապացոյցը կառավարութիւնների առաջ տալուց
յետոյ, նա հեռացաւ այս աշխարհից և իբրեւ անյողդողդ կրօ-
նասիրութեան կատարելաւիպ՝ սրբերի բնակարանը մտաւ: —
Ի՞նչ է նշանակում մի այսպիսի նամակ, որ անկասկած Հռոմից
է գրուած, եթէ ոչ այն՝ որ Պօղոսը Ֆեւսի տարել է Աւետարանը
Արեւելք և Արեւմտքը և Ֆեւսի իւր ընթացքը աւարտել է Արե-
ւմտքում: Եթէ Պետրոս էլ Պօղոսի նման նահատակուած լինէր
Հռոմում, միթէ նամակը նորա մասին էլ չէր վկայել և Պօղոսին
տուած գովեստներին մասնակից չէր անել նորան: Եթէ Պետրոսը
եղած լինէր Հռոմի ճշմարիտ եպիսկոպոսը, Եկեղեցու գլուխը
և Քրիստոսի փոխանորդը, ինչպէս որ պնդում են Հռոմի գա-
հակալները, որքան աւելի ընդարձակ յիշատակութիւն եղած
կըլինէր նորա մասին:

Այսպիսով Պետրոս առաքելալի Հռոմ գալու և այնտեղ նա-
հատակուելու պատմութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի առաս-
պել, նման այն բազմաթիւ առասպելների, որ այլ և այլ ժամա-
նակներում հիւսուել են նշանաւոր անձանց վրայ, և այդ
առասպելը, ըստ Գելլերի, կազմուել է ոչ վաղ քան Բ-րդ դարի
երկրորդ քառորդին, վասն զի Կղեմէս Ադարի վերջերում, և
գործք Առաքելոցը, որ խմբագրուեցաւ 125 թուականի մօտերը,
ոչինչ տեղեկութիւն չունին նորա մասին*):

Ահա եզրակացութեանն է հասնում Գելլերը իւր հետազո-
տութեան մէջ: Տարակոյս չկայ որ այսպիսի խուզարկութիւն-
ների մէջ ենթադրութիւնը միշտ մեծ տեղ ունի. չէ կարելի
մութեմատիկական ճշգրտութեամբ ապացուցանել ճշմարտու-

(*) Գելլերը երկարօրէն խօսում է այս առասպելի ծագման և հետզհետեւ
կրած փոփոխութիւնների վրայ ընդարձակ պատճառաբանութիւններով,
որոնց յիշատակութիւնը շատ հեռու կը տանէր մեզ:

Թիւնը, Սակայն և այնպէս պէտք է համաձայնել որ հաւանա-
կանութիւնը միանգամայն այն դրութեան կողմն է որ հաստա-
տում է թէ Պետրոս առաքեալը երբէք Հռոմ եկած չէ, և բո-
լորովին հակառակ է այն դրութեանը որ հակառակն է պըն-
դում: Երբ տեսնում ենք թէ որպիսի արագութեամբ են կաղ-
միւում առասպելները, մանաւանդ հաւատի աղբեցութեան
հերքոյ, մի աւանդութիւն, որ վերաբերում է ամէնից ուշ 67
թուին կատարուած իրողութիւններին, և որի առաջին հետքը
գտնվում է լոկ հետեւեալ դարի երկրորդ քառորդում, մեծ
յարգ չէ կարող ունենալ պատմութեան առաջ, Բնական է սա-
կայն որ այն օրից երբ Հռոմի եպիսկոպոսները սկսան գահերի-
ցութեան ետեւից լինել և իրանց Եկեղեցուն մի նախապատ-
ուութիւն սեպհականել միւս եկեղեցիների վրայ, որ համապա-
տասխանում էր իրանց նստած քաղաքի նախապատուութեանը
աշխարհի միւս քաղաքների վրայ, բնական է, ասում ենք, որ
նոքա կամենային իրանց Եկեղեցին նախնական Եկեղեցու երկու
ամենափառաւոր անունների հովանաւորութեանը տակ դնել,
և ներկայանալ աշխարհին միանգամայն իբրեւ Պետրոսի և Պօ-
ղոսի յաջորդներ: Երբ միանգամ Պետրոսի և Պօղոսի միա-
ժամանակ Հռոմում բնակելու և միեւնոյն հալածանքով մեռ-
նելու աւանդութիւնը հաւատացեալների կողմից ընդունե-
լութիւն գտաւ Հռոմի գահակալները ամէն ջանք արին այդ
հաւատը իրանց ձեռքերով ոռոգելու, աճեցնելու և պողա-
բեր անելու:

Ահեկի Ժ. և Ապրիլ Ժէ, յերիցս երանեալ հայրն մեր ի սուրբ
Հայրապետն Յովհան Ուննացին: Յայտարարութիւն բանից ի
նուաստէ Վարդանայ. ի խնդրոյ տեսուն Համազասպայ Արհի Ե-
պիսկոպոսի մեծի Աթոռոյն Հաղատայ առ որ սկիզբն նախա-
դրութեան ճառիս պատասխանի է:

Պայծառ ջահն Արեւելից Եկեղեցեացս. այրն քրիստոսազգեաց
Գրիգորիոս, բնախօսել կամելով զբորբորումն աստեղածե ցոլ-
մանցդ՝ որ գործի յաճախ ի յօդ այդր. ոչ այլ ինչ ասաց պատ-